ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-20/21 ծածկագրով բաց մրցույթով ատեստատների, վկայականների, դիպլոմների և գովասանագրերի գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 05.03.2020թ. ժամը 10:00-ին Էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Ազատյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Մանուկյան /գնահատող/

Կ. Բաբայան /գնահատող/

Գ. Խաչատրյան /բացող/

Ա. Պապիկյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մարգարյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-20/21 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-20/21 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. հասցեները
1	<<Ոսկան Երևանցի>> տպագրատուն ԱՀ ԲԲԸ	info@veprimt.am

3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

4. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

4.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

5. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

5.1 Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը 1-ին, 3-րդ և 4-րդ չափաբաժինների համար համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, իսկ 2-րդ չափաբաժնի համար Հավելված 2 գնային առաջարկով ներկայացված ԱԱՀ-ի գումարը չի համապատասխանում <<Ավելացված արժեքի մասին>> ՀՀ օրենքի պահանջներին:

6. Մասնակցի առաջարկած գները.

6.1 Մասնակիցը ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը.

Չափաբաժին	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակցի անվանումը	
		<<Ոսկան Երևանցի>> տպագրատուն ԱՀ ԲԲԸ	
		Առաջարկված գինը, ՀՀ դրամ	
		առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ
1	**7 717 500**	6 431 250	7 717 500
2	**9 822 400**	8 185 300	9 822 400
3	**2 640 000**	2 200 000	2 640 000
4	**4 914 000**	4 095 000	4 914 000

7. Գնահատման գործընթացի արդյունքում մերժված հայտերի վերաբերյալ.

7.1 Հաշվի առնելով սույն արձանագրության 5.1 կետը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.17թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը՝ մերժել <<Ոսկան Երևանցի>> տպագրատուն ԱՀ ԲԲԸ-ի հայտը 2-րդ չափաբաժնի համար՝ հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

8. Գնահատման գործընթացի կասեցման և բանակցությունների կազմակերպման վերաբերյալ.

8.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.17թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և հրավիրել <<Ոսկան Երևանցի>> տպագրատուն ԱՀ ԲԲԸ-ին 1-ին, 3-րդ և 4-րդ չափաբաժինների համար հայտով ներկայացված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների ս.թ. մարտի 9-ին ժամը 10:30-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 308 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի բանակցությունների նիստը շարունակվեց 09.03.2020թ. ժամը 10:30-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Ազատյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Մանուկյան /գնահատող/

Կ. Բաբայան /գնահատող/

Գ. Խաչատրյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մարգարյան

Բացակայում էր հանձնաժողովի անդամ՝ Ա. Պապիկյան /բացող/

Բացակայում էր՝ <<Ոսկան Երևանցի>> տպագրատուն ԱՀ ԲԲԸ-ի ներկայացուցիչը

9. Գնման գործընթացին հայտ ներկայացրած մասնակիցների հետ միաժամանակյա բանակացությունների վարման մասին

9.1 <<Ոսկան Երևանցի>> տպագրատուն ԱՀ ԲԲԸ-ի ներկայացուցչի բացակայության պատճառով վերջինիս հայտով ներկայացված գինը 1-ին, 3-րդ և 4-րդ չափաբաժինների համար թողնել անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

10. Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

10.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը առաջին տեղ զբաղեցրած (ընտրված) մասնակից ճանաչել <<Ոսկան Երևանցի>> տպագրատուն ԱՀ ԲԲԸ-ին 1-ին, 3-րդ և 4-րդ չափաբաժինների համար;

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

10.2 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը՝ գնման գործընթացը 2-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ հայտը չի համապատասխանում հրավերի պայմաններին հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

11. Գնահատման արդյունքների մասին

11.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հիմք ընդունելով ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը՝ առանց անգործության ժամկետ սահմանելու, ընտրված մասնակցին, էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____Ս. Ազատյան /նախագահ/

_____Կ. Մանուկյան

_____Կ. Բաբայան

_____Գ. Խաչատրյան

_____Ա. Մարգարյան /քարտուղար/